ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ/ԷՋՄ/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ

Հարգարժան համագյուղացիներ և հյուրեր այսօր Ձեր քննարկմանն եմ ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս/էջմ/ համայնքապետարանի և ավագանու կողմից 2019 թվականի աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքների կատարողականի մասին : Ես կներկայացնեմ յուրաքանչյուր բնագավառ առանձին – առանձին և վերջում կդրվի քննարկման և կլսենք Ձեզանից յուրաքանչյուրի կարծիքն ու առաջարկությունները:

1. Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառ

1) Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է՝ քաղաքացիների ընդունելության օր , որի ժամանակ լուծվում են բնակիչների բազմաթիվ խնդիրներ : Քաղաքացիներից 2019 թվականի ընթացքում համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելություններին մասնակցել է մոտավորապես 110 և ավել քաղաքացի և բավարարվել է նրանց կողմից առաջադրված խնդիրները :

2) Պաշտպանվում են համայնքի բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը

3) Համայնքում կատարվել է բնակիչների սեռա-տարիքային ամենամյա հաշվառում

ա) բնակչությունը՝ 1849 մարդ

4) Կայացվել են որոշումներ , որոնցով խթանվել են տնտեսական գործունեություն նախաձեռնողների ծրագրերը և դրանց իրականացումը

2. Տեղական Ինքնակառավարմանը բնակչության մասնակցության բնագավառ

1) Համայնքի բնակիչների համար ստեղծված են բավարար պայմաններ իրազեկ լինելու համայնքապետարանի գործունեության մասին :

2) Համայնքի ղեկավարի կողմից ներկայացվել է 2019 թվականի 1-ին կիսամյակի

Հաշվետվությունը:

3. Ֆինանսների բնագավառ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս/էջմ/ համայնքի բյուջեով 2019 թվականին հաստատվել են .

Եկամուտներ ընդամենը՝ 67617,1 հազար դրամ

1. վարչական բյուջե՝ 46439,0 հազարդրամ
2. ֆոնդայի նբյուջե՝ 21178,1հազար դրամ

Բյուջեի եկամուտները՝

	Եկամուտների տեսակները	Տարեկան պլան	2-րդ եռամսյակի պլանը առ 01. 07. 2019 թ.	Հաշվետու ժամանակաշրջան	
				Փաստացի առ 01. 07. 2019 թ.	Տոկոս
1	Հողի հարկ	6606.4	6606.4	8539,7	129,3
2	Գույքահարկ	5211,4	5211,4	6524,6	125,2
3	Տեղական տուրքեր	400.0	400.0	92,6	23,2
4	Վարձակալության վճար	1600.0	1600.0	822,3	51,4
5	Տեղական վճարներ	1265.7	1265,7	56,8	4,5
6	դոտացիա	31295,7	31295,7	31295,7	100.0
7	Տարեսկզբի ազատ մնացորդ	21137.9	21237.9	21237,9	100
8	Այլ ոչ հարկային եկամուտներ	-	-	872,9	-
ԸՆԴԱՄԵՆԸ		67617.1	67617,1	69442,5	102,1

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ՝

	Ծախսերի տեսակները	Տարեկան պլան	2-րդ եռամսյակի պլանը առ 01. 07. 2019 թ.	Հաշվետու ժամանակաշրջան	
				Փաստացի առ 01. 07. 2019 թ.	Տոկոս
1	կառավարման ապարատ	33702,0	33702,0	26515,6	78,7
2	մշակույթ,սպորտ,կրոն	4200.0	4200.0	2920,2	69,5
3	աղբահանություն	1500.0	1500.0	1500,0	100
4	Կեղտաջրերի հեռացում	--	--	-	-
5	Գյուղատնտեսություն	487.0	487.0	448,5	92,1
6	սոց. ծրագրեր	3700,0	3700,0	3570,0	96,5
7	տրանսպորտային միջոցների ձեռքբերում	1500.0	1500.0	786,9	52,5
8	Քաղ. պաշտպանություն	--	--	-	-
9	Նախագծահետազոտական աշխատանքներ	3000,0	3000,0	950,0	31,7

10	Պահուստային ֆոնդ	--	-	-	-
11	Շենք և շինությունների կապիտալ շինարարություն	12678,1	12678,1	-	-
12	Տրանսպորտ	1000.0	1000.0	960,0	96
13	Արտաքին Լուսավորում	1850,0	1850,0	1170,8	63,3
14	Սարք և սարքավորումներ ձեռք բերման ծախսեր	4000,0	4000,0	2456,4	61,4
ԸՆԴԱՄԵՆԸ		67617.1	67617,1	41278,4	61,4

1) Կազմվել է համայնքի տարեկան աշխատանքային պլանը , որն հաստատվել է համայնքի ավագանու կողմից

2) Կազմվել է 2019 թվականի բյուջեում առաջացած փոփոխությունները , ներկայացվել են համայնքի ավագանու հաստատմանը

3) Կազմակերպվել և իրականացվել են հողի հարկի , գույքահարկի , վարձակալությամբ տրված գույքի , տեղական տուրքերի և վճարների , մատուցվող ծառայությունների վճարների գանձումն ու վերահսկում:

4) Հարկ չվճարողների հետ տարվել են համապատասխան բացատրական աշխատանքներ , ինչպես նաև ուղարկվել են ծանուցումներ հարկերը վճարելու համար:

4.Հանրային միջոցառումների կանոնակարգման բնագավառ

1) Համայնքում իրականացվել են՝

ա) Երեխաների պաշտպանության միջազգային օրվա՝ Հունիսի 1-ին նվիրված միջոցառումներ

բ) Մարտի 8-ին և ապրիլի 7-ին նվիրված միջացառումներ, բաժանվել են նվերներ և իրականացվել է ճաշկերույթ :

գ) Վերջին զանգի կապակցությամբ ավարտական դասարանի աշակերտներին տրվել են նվերներ:

դ) Մայիսի 9-ի կապակցությամբ եղել է ճաշկերույթ:

ե) Սեպտեմբերի 1-ին գիտելիքի օրվա կապակցությամբ համայնքում հանդիսությունների սրահում կատարվել է ճաշկերույթ մատաղի տեսքով, որին ներկա է եղել Արմավիրի մարզի մարզպետ՝ Հ.Մաթևոսյանը:

զ) Ինչպես ամեն տարի , այնպես էլ 2019 թվականին սեպտեմբեր ամսին համայնքի կողմից 1-4 րդ դասարանի աշակերտներին հանձվվել է թեմատիկ տետրեր, ինչպես նաև նախակրթարանին տրամադրվել է տառադարաններ, խաղալիքներ և այլ անհրաժեշտ պարագաներ:

է) Պատշաջ կերպով կազմակերպվել է նոր տարվա միջոցառումները և 115-երեխայի հանձնվել է նվերներ:

5.Պաշտպանության բնագավառ

1) Աջակցել ենք զորակոչին

2) Համայնքում անցկացվել են միջոցառումներ երիտասարդության ռազմահայրենա - սիրական դաստիարակության բարձրացման վերաբերյալ

3) ՀՀ բանակին նվիրված միջոցառումներ

6. Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառ

1) Աջակցել ենք Քաղաքացիական Պաշտպանության և Արտակարգ

Իրավիճակների մարմինների գործունեությանը

7 .Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատողներին տրվել են շինարարության և շին-քանդման թույլտվություններ:

2) Իրականացվել են համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների հաշվառումն ու բաշխումը,ինչպես նաև կատարել ենք համայնքի սեփականության ամենամյա գույքագրումը

3) Կատարել ենք՝

ա) համայնքի ճանապարհների խճապատման ու հարթեցման աշխատանքներ

4) Իրականացվել է համայնքի բարեկարգումը և կանաչապատումը , կանաչ գոտիների խնամքն ու պահպանությունը

5) Համայնքում կատարվում է աղբահանություն

6) Համայնքի մաքրման համար կազմակերպվել և անցկացվել են շաբաթօրյակներ , <<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակներում կազմակերպվել և անցկացվել են համապետական շաբաթօրյակներ:

7) Ջրցան մեքենայով ամիսը 2 անգամ լվացվել են համայնքի ասֆալտապատ փողոցները:

8 .Հողօգտագործման բնագավառ

1) վերահսկվում է հողերի նպատակային օգտագործումն և պահպանումը

2) Չափագրվել և ուղղումներ են կատարվել համայնքի որոշակի հողատարածքներում

3) Իրականացրել ենք համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը և կազմվել է համայնքի հողային հաշվեկշիռը

9. Տրանսպորտի բնագավառ

1) Կարգավորել ենք համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը

2) Կատարվել է համայնքի ճանապարհների հարթեցում և խճապատում

10. Առևտրի և ծառայությունների բնագավառ

1) Հսկողություն է իրականացվում համայնքի առևտրի , հանրային սննդի ծառայությունների ոլորտում

2) Տրվել են ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություններ

11. Կրթության , մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառ

1) Աշխատում են համայնքի մշակույթի տունը, գրադարանը,

2) Աջակցել ենք համայնքի դպրոցին

3) Համայնքում կազմակերպվել են միջոցառումներ `

- Նվիրված Հայաստանի բանակի 27-ամյակին և Համայնքի ժամկետային, պայմանագրային զինծառայողներին,
- Կանանց միջազգային օրվա `մարտի 8-ի և ապրիլի 7-ի . տոների կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում, համայնքապետարանի , մշակույթի տան , բուժ. Ամբուլատորիայի, միջնակարգ դպրոցի կին աշխատակիցների համար :
- Նվիրված Մեծ Եղեռնի 104 ամյակին
- Նվիրված Աշխատանքի տոնին
- Նվիրված հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 74- ամյակին և Շուշիի ազատագրման 27 - ամյակին , մեծարվել են մասնակիցները
- Նվիրված Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 101-ամյակին:

2. Առողջապահության , ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բագավառում

1) Աշխատում են համայնքի բուժ. ամբուլատորիան

3) Աջակցել ենք համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը , առողջ ապրելակերպին:

13. Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում

1) Աջակցել ենք սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական պայմանների բարելավմանը , ֆինանսական աջակցության կարիք ունեցողներին հատկացվել է դրամական օգնություն :
2) Միջոցներ ենք ձեռնարկում նոր աշխատեղեր ստեղծելու համար
3) Կազմակերպվում է համայնքում մահացած քաղաքացիների համար ծաղկեպսակի տրամադրում

4) Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 30 որոշում
5) Համայնքի ղեկավարի կողմից արձակվել է 47 կարգադրություն
6) Տրվել է 624 տեղեկանքներ
7) ՈՒսումնասիրվել է ավելի քան 74 դիմում

14 . Գյուղատնտեսության բնագավառում

1) Աջակցել ենք գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը

2) Մաքրվել է համայնքի ոռոգման ցանցի որոշակի տարածքներ

15.Անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառ

1) Կազմակերպվել և իրականացվել է համայնքի կենդանիների և թռչունների հաշվառում
2) Կատարվել է ծառերի էտման և սպիտակեցման աշխատանքներ
3) Աջակցել ենք անասնաբուժական ծառայության աշխատանքներին , ունենք անասնաբուժ և աշխատավարձի վճարումը կատարվում է համայնքի բյուջեից

16. Շրջակա միջավայրի պահպանության բնագավառում

1) Պահպանվում են համայնքի կանաչ գոտիներն ու ծառերը

2) << Հայրենական Մեծ պատերազմի >> հուշարձանի տարածքը կանաչապատվել է տեղադրվել են նստարաններ և կառուցվել է հանգստի տաղավար:

17. Զբոսաշրջության բնագավառ

1) Աշխատանքներ են տարվում համայնքում ստեղծել ռեսուրսներ , նախադրյալներ զբոսաշրջության բնագավառի համար

Արաքս համայնքում կարևոր և առաջնային խնդիրներն են՝

1. Համայնքի գազաֆիկացում

2. Մանկապատրեզի վերանորոգում

3. Մշակույթի տան վերանորոգում

4. Դպրոցի վերանորոգում

Որոնցից մանկապարտեզի վերանորոգումը նախատեսվում է իրականացնել 2020 թվականին սուբվենցիոն ծրագրով:

Արաքս համայնքում 2019 թվականին կատարված աշխատանքները

Համայնքում 2019 թվականի ընթացքում նախատեսված էր կատարել հետևյալ աշխատանքները՝

1. Համայնքում ոռոգման ջրի պոմպակայանի և խմելու ջրի վերանորոգում
2. Փողոցային լուսավորության անցկացում
3. Համայնքի ճանապարհների խճապատում , հարթեցում և մասնակի ասֆալտապատում
4. Ավարտին հասցնել հանդիսություններ սրահը

Նշված աշխատանքները կատարվել են՝:

ա) Համայնքում կատարվել է 3 փողոցների՝ Բարեկամության փողոցի վերջնամասի 350մ, Գ.Նժդեհի փողոցի և Ջ.Աղայի փողոցի 110մ խմելու ջրի խողովակների փոխման աշխատանքներ:

բ) Համայնքում կատարվել է 90 տոկոս փողոցների լեդ լուսավորության անցկացում:

գ) Համայնքում կատարվել է համայնքային փողոցների խճապատում և հարթեցում , ինչպես նաև կատարվել է Պ.Սնակի, Դրոյի և Ռաֆֆու փողոցների մասնակի ասֆալտապատում:

դ) Ավարտին է հասցվել և շահագործման է հանձնվել համայնքի հանդիսություններ սրահը:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ ՍԱՆԱՍԱՐ ԽԱԼԱԹՅԱՆ

07.02.2020 թվական

Արաքս/էջմ/ համայնքապետարան